ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԲԱՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության <<Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկը, որը գտնվում է ՀՀ, ք.Երևան, Նալբանդյան 28 հասցեում, ստորև ներկայացնում է ՏԾԻԳ-ՊԱԾՁԲ1504-2011/30 ՀՀՏՋ ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու ընթացակարգի արդյունքում 09.11.2011թ.-ին կնքված ՏԾԻԳ-ՊԱԾՁԲ1504-2011/30 ՀՀՏՋ պայմանագրում 2014թ. նոյեմբերի 12-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառը	Փոփոխությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 16-ի N 1125-Ա որոշման ընդունմամբ, որով թույլատրվել է «Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկին պայմանագրով նախատեսված ծառայությունների կատարման ժամկետը փոփոխել: Քանի որ քաղաքաշինության մասին օրենսդրությամբ տեխնիկական հսկողությունն իրականացվում է ամբողջ շինարարության ընթացքում, դրանից բխող համապատասխան փոփոխություն է կատարվել պայմանագրում:
Փոփոխության նկարագրություն:	Կատարվել է փոփոխություն Գնման պայմանագրի թիվ 1 հավելված հանդիսացող՝ «Տեխնիկական բնութագիր (առաջադրանք)»-ի վերջին՝ «Աշխատանքների կատարման ժամկետը» բաժնում:
Փոփոխության հիմնավորում:	ՀՀ կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 16-ի N 1125-Ա որոշում:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Դ.Հայրապետյանին:

Հեռախոս՝ 010 /580-523/

Էլ. փոստ՝ dhayrapetyan@transportpiu.am

Պատվիրատու՝ «Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ